ՀՏԴ 159.9 Հոգեբանություն

ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՐՊԵՍ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ, ՀՈԳԵՇՏԿՄԱՆ ՈՒ ՀՈԳԵԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Արմինե ԱԼՈՅԱՆ

Բանալի բառեր՝ *կրթահամակարգ, ավագ դպրոց, անհատական աշխատանք, թիմաձևավորում, թիմային աշխատանք, թիմ, թիմային բնութագրություններ, հոգեշտկում, հոգեկարգավորում, անձնային աճ:*

Ключевые слова *– система образования, старшая школа, индивидуальная работа, командообразования, командная работа, команда, психокоррекция, психорегуляция, личностный рост.*

Key words*: system of education, high school, personal work, team formation, team work, team, team description, psychological correction, psychological arrangement, personal development.*

КОМАНДНАЯ РАБОТА КАК ФАКТОР РЕШЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКИХ ПРОБЛЕМ, ПСИХОКОРРЕКЦИИ И ПСИХОРЕГУЛЯЦИИ СТАРШЕКЛАССНИКОВ

А.АЛОЯН

В статье рассматривается вопрос создание старших школ в системе образования, необходимость и важность внедрения новых форм психологической работы, направленной на повышение эффективности образовательной деятельности, а так же личностного роста старшеклассников. С этой точки зрения особое значение имеет процесс командообразования в классных коллективах старшеклассников. Использование функций команды в этом аспекте поможет решить множество психологических проблем в этом звене образования.

TEAM WORK AS A FACTOR OF RESOLUTION OF HIGH SCHOOL CHILDREN'S PSYCHOLOGICAL PROBLEMS AND PSYCHOLOGICAL CORRECTION

A.ALOYAN

In the article it is spoken about formation of high schools in Artsakh education system and in this circle about investment of new forms of psychological work which is directed to the effectiveness increase of learners' educational work .

In this case it is important to underline the role of high school classes as a tendency of team development. The usage of team function in high schools will give an opportunity not only to form classes as teams, but also will promote each member's personal and individual team development .

Հոդվածում անդրադարձ է կատարվում կրթահամակարգում ավագ դպրոցների ձևավորմանը և այդ օղակում սովորողների կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված հոգեբանական աշխատանքի նոր ձևերի ներդրմանը: Այս տեսանկյունից կարևորվում է ավագ դպրոցներում դասարանները որպես թիմեր զարգացնելու միտումը: Թիմային գործառույթների կիրառումը ավագ դպրոցներում հնարավորություն կընձեռի ոչ միայն դասարանները ձևավորել որպես թիմեր, այլ թիմաձևավորման և թիմազարգացման ճանապարհով նպաստել այդ թիմերի յուրաքանչյուր անդամի անհատական, անձնային զարգացմանը, հոգեշտկմանը և հոգեկարգավորմանը:

Կրթական ոլորտի բարեփոխման նպատակով իրագործվող ծրագրերից մեկը ավագ դպրոցների կազմավորումն էր: Այսօր էլ արդիական են կրթահամակարգի այդ օղակում ուսուցման ու դաստիարակության գործընթացներն առավել նպատակային դարձնելուն ուղղված ծրագրերը: Կարծում ենք, որ այդ ծրագրերի կողքին կարևոր է նաև ավագ դպրոցականների հետ տարվող աշխատանքների նոր ձևերի ու մեթոդների ներդրումը, մասնավորապես, հոգեբանամանկավարժական ոլորտում: Դիտարկումները ցույց են

տվել, որ այսօր ավագ դպրոցականներն առավել նախընտրում են անհատական աշխատանքը, սակայն հոգեբանական հիմնավորումները մատնացույց են անում, որ ավագ դպրոցականների հետ տարվող աշխատանքներում արդյունավետ է հատկապես դասարաններում թիմերի ձևավորումը, ինչը կարող է բարերար ազդեցություն ունենալ ավագ դպրոցականների հոգեբանական խնդիրների լուծումն վրա: Իսկ վերջիններս քիչ չեն, հատկապես, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ կրթության համակարգի միջին օղակից դպրոցականն իր հետ մի շարք խնդիրներ է բերում ավագ դպրոց, որտեղ դրանց սրացմանը կարող են նպաստել մի շարք այլ գործոններ, այդ թվում.

- հին դպրոցից, դասընկերներից, ուսուցիչներից բաժանվելու ապրումներ
- նոր դասարանը՝ որպես սոցիալական նոր ձևավորված խումբ, որտեղ հավաքվում են դպրոցականներ տարբեր դպրոցներից՝ հետևաբար նաև ունենալով վարքի տարբեր ձևեր, տարբեր հայացքներ, տարբեր մոտեցումներ
- նոր դասարանական կոլեկտիվում դեռևս չձևավորված և չամրապնդված սոցիալական նորմերի համակարգ կամ դրա բացակայությունը
- հնարավոր լիդերության պայքար
- նոր ձևավորված դասարանում ինտեգրվելու խնդիր
- նոր ուսուցչական անձնակազմ, որը ևս ունի իր պահանջներն ու մոտեցումները, որոնք կարող են էապես տարբերվել նախկին ուսուցիչների մոտեցումներից, որոնց արդեն սովորել էր դպրոցականը
- առավել բարդ ուսումնական ծրագիր
- նոր պարտավորություններ, պատասխանատվության նոր մակարդակ
- մասնագիտական կողմնորոշվածության և ապագա կենսական ծրագրերի հստակեցման անհրաժեշտություն:

Ավագ դպրոցականների շրջանում կատարած հարցումները ցույց են տալիս, որ առաջին մտահոգությունը, որ նրանք ունենում են ավագ դպրոց գալիս, այն է՝ արդյոք կհարմարվեն նոր միջավայրին, թե ոչ: Այս հանգամանքն առավել քան կարևոր է, քանի որ ավագ դպրոցում կրթությունն ունի իր առանձնահատկությունները.

- այն պետք է իրագործվի մեծ մասամբ համագործակցության սկզբունքով, և այդ համագործակցությունը պետք է դիտվի ոչ միայն համադասարանցիների միջև, այլ նաև սովորող-սովորեցնող փոխհարաբերություններում
- ավագ դպրոցում և հանրակրթական դպրոցների ավագ դասարաններում իրականացվող կրթական գործընթացի կարևոր առանձնահատկություններից մեկը կողմնորոշումն է դեպի ապագան, մասնագիտական ճիշտ կողմանորոշմանը նպաստելը, անձնային այնպիսի որակների զարգացմանը, որոնք թույլ կտան այսօրվա դպրոցականին վաղը դառնալ հասարակության լիարժեք անդամ՝ պատրաստ և ունակ կրելու այն սոցիալական արժեքները, պարտավորությունները, տիրապետելու այն իրավունքներին, որոնք նա կունենա որպես այնպիսի սոցիալական խմբերի անդամ ինչպիսիք են, օրինակ, ուսանողական, աշխատանքային կոլեկտիվները և մասնավորապես ընտանիքը, որտեղ, անկասկած, փոխվելու է այսօրվա ավագ դպրոցականի դերակատարումը:

Նման պարագայում կենտրոնական խնդիր է հանդիսանում շփման ոլորտում ունակությունների ու կարողությունների կատարելագործումը: Եթե ընդհանուր առմամբ կոմպետենտայնությունը դիտարկվում է որպես <<… գիտելիք և փորձ այս կամ այն ոլորտում>> [8, էջ 621], բայց շփման մեջ այն դիտարկվում է առավել լայն սահմաններում՝ որպես բարդ կազմավորում, որի մեջ ընդգրկված են միջանձնային շփման ոլորտի գիտելիքներ, սոցիալական դիրքորոշումներ, կարողություններ և փորձ [4], ինչն, անկասկած, անհրաժեշտ է այսօրվա ավագ դպրոցականին, ով կանգնած է բավականին լուրջ մարտահրավերների առջև՝ ապագա կյանքի ճիշտ պլանավորում, դեպի հասուն կյանք տանող ճանապարհի հաղթահարում, նոր շրջապատի ինտեգրում, պրոֆերենտայնության խնդիրներ և այլն:

Հաղորդակցման ընթացքում ձեռք բերած ապրումների փորձը հանդիսանում է մի շարք այնպիսի հոգեբանական որակների բաղկացուցիչ մաս, ինչպիսիք են հումանիստական դիրքորոշումների զարգացումը, տարիքային սոցիալ- հոգեբանական ակտիվությունը, շփման գիտակցումը՝ որպես ինքնուրույն արժեք: Հուզական բաղկացուցչի մյուս կարևոր տարր է հանդիսանում այնպիսի բնութագրությունը, ինչպիսին է ինքնավերաբերմունքը, ինքնագիտակցության ներքին դինամիկայի առանձնահատկությունը, սեփական <<ես>>-ի հանդեպ անձի վերաբերմունքի յուրահատկությունն ու կառուցվածքը, որոնք կարգավորող ազդեցություն են ունենում մարդկային վարքի բոլոր կողմերի վրա, կարևոր դեր են խաղում միջանձնային հարբերությունների կառուցման ժամանակ [5]: Թիմերում առկա մթնոլորտը հնարավորություն է տալիս նաև հասնելու հաղորդակցման մակարդակի բարձրացմանը: Ընդհանուր առմամբ՝ թիմերին ներկայացվող պահանջներն ու բնութագրությունները, հիմնականում, բխում են փոքր խմբերի բնութագրություններից, որոնք ներկայացվում են որպես <<մարդկանց համեմատաբար ոչ մեծաքանակ հանրույթ, իրար միջև գտնվող անմիջական անձնային շփման և փոխգործակցության մեջ>> [6, էջ 69], <<…խումբ, որտեղ հասարակական հարաբերությունները հանդես են գալիս անմիջական անձնային կոնտակտների ձևով>> [1, էջ238]: Գ. Մ. Անդրեևան թիմը դասում է ձևական խմբերի շարքին և այն դիտարկում որպես ղեկավարին ենթակա խմբեր՝ լիդերի և նրա գործընկերների [2, էջ137]: Համաձայն շվեդական ժամանակակից հետազոտողների տեսակետների՝ թիմը ընդհանուր եզրագծեր ունի խմբի հետ, սակայն թիմում առավել մշտական անձնակազմ է, դերերի առավել հստակ բաշխում, առավել հստակ ու ձևական նպատակ: Թիմի անդամները այնքան միահամուռ են, որ կողքից, նույնպես ընկալվում են որպես թիմակիցներ: Իսկ թիմի անդամները թիմային մասնակցությունը դիտարկում են որպես պարգևատրում: Թիմը ձգտում է ընդհանուր նպատակի իրագործման: Թիմակիցները շրջապատի նկատմամբ գործում են միատեսակ, բոլորը հպարտ են, որ միասին կարող են հասնել ավելիին, քան առանձին-առանձին: Թիմում բավարարվում են անձի մասնակցության, հարգանքի, հաջողության / նույնիսկ, եթե այն խմբային է/ պահանջմունքները [3, էջ 226]: Թիմի կենտրոնական բնութագրականներից է հաղորդակցման բարձր աստիճանը, ինչն, անկասկած, նախապայման է դրական լուծումների համար:

Համաձայն Տ. Լ. Բուկայի և Մ. Լ. Միտրոֆանովայի տեսակետների՝ երբ խումբն արդեն տիրապետում է հաղորդակցման և հետադարձ կապի արդյունավետ համակարգին, ապա խմբակիցները միասին կարող են լուծել առավել բարդ և բազմանկյուն խնդիրներ [7, էջ 100]:

Վերոնշյալը հիմք է հանդիսանում վստահաբար ասելու, որ ավագ դպրոցում դասարանական կոլեկտիվը պետք է լինի ավելին, քան սովորողների խումբ, և զարգանա որպես թիմ: Թիմ, որի անդամները կունենան հաղորդակցվելու, նպաստավոր փոխհարաբերություններ կառուցելու, համատեղ գործելու, թիմային նպատակներ իրագործելու ճանապարհով միմյանց սուբյեկտիվ աշխարհը, սեփական կարողությունները բացահայտելու հնարավորություններ, ինչն էլ կարող է բեկումնային ազդեցություն ունենալ ավագ դպրոցականի համար կարևոր այնպիսի խնդիրների լուծման պարագայում, ինչպիսին, օրինակ, մասնագիտական կողմնորոշվածության հարցն է: Քանի որ հնարավոր է, որ ավագ դպրոցականը իրեն մինչ այդ չտեսնելով

խմբային աշխատանքում կամ թերագնահատելով թիմային գործելակերպը իր համար ընտրի այնպիսի մասնագիտություն, որն առավել շատ անհատական է, սակայն արդեն ավագ դպրոցում, տեսնելով թիմի ընձեռած հնարավորությունները, փոխի նաև իր մասնագիտական կողմնորոշվածությունը: Բացի այդ՝ ապագայի ծրագրերի մասին խորհելիս հաճախ հարց է ծագում՝ <<իսկ ինչ կարող եմ ես, կարող եմ ընդհանրապես>>, և թիմային աշխատանքը թույլ է տալիս նաև այս պարագայում ձեռք բերել ինքնավստահություն: Հաջորդ նպաստավոր ոլորտը, որը կարող է թիմ դարձած դասարանը դպրոցականի համար բացահայտել, պատասխանատվության ձևավորումն է, ուրիշների՝ ընդհանուր նպատակների իրագործման համար պարտավորություն կրելը, ինչպես նաև՝ ընդհանուր հաջողության մեջ ունեցած սեփական ներդրման գիտակցումը և այդ գիտակցումից ստացած բավարարության զգացողությունը, ինչն իր հերթին ավագ դպրոցականի մեջ ձևավորում է ուրիշներին օգտակար լինելու, համընդհանուր նպատակներին ծառայելու, սեփական ցանկությունները հանուն ընդհանուրի՝ առավել արժեքային նպատակների իրագործմանը ստորադասելու կարողությունը: Բացի այդ՝ թիմային աշխատանքը թույլ է տալիս ձևավորել թիմի յուրաքանչյուր անդամի մեջ թիմակցի արարքների դրդապատճառները հասկանալու, նրան ապրումակցելու, կառուցողական քննադատություն ձևավորելու կարողություն:

Ավագ դպրոցը պետք է հանդիսանա կրթական այն օղակը, որտեղ ակադեմիական գիտելիքների կողքին պետք է կարևորվի դպրոցականների անձնային, սոցիալական արժեքները գնահատելու, համագործակցելու, հաղորդակցվելու, իրար օգնելու կարողությունների ձևավորումը: Այս իսկ պատճառով, խոսելով ավագ դպրոցականների հոգեկարգավորման և հոգեշտկման մասին, առաջնահերթ ենք համարում վերոնշյալ որակներին խոչընդոտող անցանկալի որակների դրսևորումների շտկումը թիմի ազդեցության ներքո: Եթե այս օղակում ավագ դպրոցականն ունակ լինի գործելու թիմի կազմում, ապա ապագայում նա այդպիսին կլինի նաև՝ որպես որևէ աշխատանքային կոլեկտիվի անդամ, իսկ եթե աշխատանքային կոլեկտիվի յուրաքանչյուր անդամ գործի թիմային գաղափարախոսությամբ, ապա նման կոլեկտիվում առաջնային են լինելու ոչ թե անձնային շահը, այլ համընդհանուր նպատակները, և արձանագրվող արդյունքներն էլ լինելու են առավել արդյունավետ: Ասել է թե՝ աշխատելով ավագ դպրոցականի հետ՝ մենք լուծում ենք ապագայի խնդիրներ:

Պետք է հավելել նաև, որ թիմակազմավորման գործընթացն ավագ դպրոցականների շրջանում առավել նպաստավոր է հենց այս փուլի սկզբնական օղակում, որտեղ մինչ այդ տարբեր կրթօջախներից հավաքված դպրոցականները կստանան առավել արագ համագործակցության եզրեր գտնելու, հաղորդակցման մեջ առավել կոմպիտենտ դառնալու հնարավորություն, ինչը կնպաստի հետագա փոխհամագործակցության ձևավորմանը և զարգացմանը:

Ավագ դպրոցականների դասարանական խմբերում թիմակազմավորման գործընթացը կարևորում ենք անհատի վրա խմբի ունեցած ազդեցության տեսանկյունից, սակայն որպեսզի դասարանը դառնա այն խումբը, որը կարող է ազդել աշակերտի վրա, այն պետք է այդ աշակերտի համար ներկայացնի որոշակի արժեք, այսինքն՝ լինի ռեֆերենտային: Իսկ ավելի ռեֆերենտային կարող է լինել թիմը, այլ ոչ թե՝ ուղղակի

խումբը: Թիմային աշխատանքի ընթացքում ավագ դպրոցականը կարող է լուծել մի շարք հոգեբանական խնդիրներ, որոնցից են.

- սոցիալ-հոգեբանական գիտելիքների տիրապետում
- հաղորդակցման և շփման մեջ կոմպետենտայնության աստիճանի բարձրացում
- թիմում գործելու ունակության ձևավորում
- թիմակիցների հետ համագործակցելու կարողություն
- սեփական անձի և այլ մարդկանց ճանաչելու կարողության զարգացում
- դրական ինքնագիտակցության ձևավորում

Ավագ դպրոցականների կողմից խմբային աշխատանքում սեփական ես-ի բացահայտումը տեղի է ունենում ուրիշների հետ սեփական անձը համադրելու, հոգեբանական անդրադարձի, հակադարձ կապի /ուրիշների <<աչքերով>> իրեն ընկալելու հնարավորություն/ միջոցով, իր իսկ գործունեության արդյունքները տեսնելու, դրանք նաև ուրիշների տեսանկյունից գնահատելու միջոցով, իր հուզազգացմունքային ոլորտի ընկալման միջոցով: Այսպիսով, տեղի է ունենում ավագ դպրոցականի անձի զարգացում, հոգեբանական հասունացում, ինչը և պետք է հանդիսանա ավագ դպրոցականների դաստիարակության հիմնական նպատակը, քանի որ եթե այդ նպատակը լիարժեքորեն չի իրագործվում, ապա ավագ դպրոցականը հասուն կյանք է մտնում ոչ բավարար սոցիալ-հոգեբանական զարգացվածության մակարդակով: Իսկ եթե այդ մակարդակի բարձրացմանը միջին և ավագ դասարաններում հատկացվում է անհրաժեշտ ուշադրություն, ապա դա դրականորեն է ազդում նաև ուսուցման, մտավոր զարգացման գործընթացի զարգացման վրա:

Հենց թիմի անդամների մոտ թիմային աշխատանքի ժամանակ առաջ եկող հոգեբանական փոփոխություններն էլ կարող են ծառայեցվել ավագ դպրոցականների հոգեշտկմանը և հոգեկարգավորմանը: Փաստորեն, թիմը հանդես է գալիս հոգեշտկողի ու հոգեկարգավորողի դերում:

Այսպես, օրինակ, սեփական խնդիրների գիտակցումն արդեն իսկ առաջին քայլն է դեպի հոգեշտկում և հոգեկարգավորում: Ավելին, տեսնելով, որ յուրաքանչյուրն ունի կարգավորման ենթակա խնդիր, անհատը այլևս չի թաքցնում սեփական թերությունները, կարող է խոսել դրանց մասին, խորհուրդ հարցնել, ինքն էլ փորձարկել ինքնակարգավորման այն միջոցները, որոնք կիրառվում են ուրիշների կողմից: Կարող ենք նաև հավելել, որ խմբում, առավելապես՝ թիմում գործելով, լուծելով տարաբնույթ խնդիրներ, անձն ընդունելի է համարում նաև խմբակիցների քննադատությունները, խմբային արժեքները և իր վարքը համապատասխանեցնելով դրանց դիմում է ինքնահոգեկարգավորման տարբեր միջոցների՝ ինքնաներշնչում, ինքնահամոզում, ինքնաարդարացում և այլն: Ձգտելով թիմային նպատակների իրագործման՝ թիմի անդամը նաև սովորում է ստորադասել անձնային պահանջմունքները, սեփական նպատակները մղել երկրորդային պլան, ինչը բավականին հոգեկան և հոգեբանական լարվածություն է պահանջում, բայց միևնույն ժամանակ՝ նպաստում կամային որակների ձևավորմանը:

Թվում է՝ թիմակազմավորման արդյունքում անձնական զարգացումը արդեն մղվում է երկրորդային պլան ու դիտարկվում որպես միջանկյալ նպատակ, և կարևորությունը տրվում է թիմի զարգացմանը: Սակայն, վերլուծության պարագայում պարզ է դառնում, որ, ի վերջո, թիմային զարգացումն ու առաջընթացը հանգեցնում են

յուրաքանչյուրի անձնական զարգացմանը, քանի որ, որպեսզի թիմը ունենա բարձր ցուցանիշներ, պետք է բարձր արդյունքներ արձանա՝րեն տվյալ թիմի բոլոր անդամները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Андреева Г. М. Социальная психология.-М.:Изд-во МГУ,1980
2.Андреева Г. М. Социальная психология. — М.: Аспект-Пресс, 1996
3.Карлоф Б., Седерберг С. Вызов лидеров. — М.: Дело, 1996
4.Петровская Л. А. Компетентность в общении. Социально-психологический тренинг.М.:Изд-во МГУ, 1989г.
5.Лабиринты одиночества: Пер. с англ. /Сост. Общ ред. и предисл. Н.Е. Покровского.-М.: Прогресс, 1989/
6.Психология: словарь/ По ред. А.В. Петровского, М. Г. 2-е изд., испр. И дополн.-М.: Политиздат, 1990
7.Психологический тренинг в группе: Игры и упражнения: Учебное пособие/ Авт.-сост. Т. Л. Бука, М. Л. Митрофанова.-М.: Изд-во Института психотерапии, 2005
8.Советский энциклопедический словарь.- М.: Советская энциклопедия, 1979

Տեղեկություններ հեղինակի մասին.
Արմինե Ալոյան
ԱրՊՀ հոգեբանության և մանկավարժության ամբիոնի դասախոս
armine.aloyan.82@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հոգեբ.գ.թ., Վ.Բ.Յարամիշյանը: